«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
31 դեկտեմբերի 2000թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 դեկտեմբերի 2000 թվականի N 902
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ԸՍՏ ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 20 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետին, 38 և 42 հոդվածներին, 53 հոդվածի 3-րդ և 54 հոդվածի 4-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) «Արտահանում՝ ազատ շրջանառության համար», «Ժամանակավոր արտահանում», «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար», «Ներմուծում՝ անմաքս առևտրի խանութ» մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) «Սեփականության իրավունքից հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

գ) «Ոչնչացում» մաքսային ռեժիմով հայաստանի հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի.

դ) «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար», «Ներմուծում՝ անմաքս առևտրի խանութ», «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «Ժամանակավոր ներմուծում» և «Ոչնչացում» մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքների ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի:

(1-ին կետը լրաց. 29.09.01 N 913)

2. Սահմանել, որ՝

ա) Հայաստանի Հանրապետությունում հսկվող դեղերի և թմրանյութերի, միջուկային (ռադիոակտիվ) նյութերի Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխումն, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 44 (փայտանյութ և դրանից արտադրանք, փայտածուխ) խմբին դասվող ապրանքների (բացառությամբ 4405 00 000, 4412-4417, 4418 10, 4418 20, 4419 00, 4420, 4421 10 000, 4421 90 910 ծածկագրերին դասվող ապրանքների) արտահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հատուկ կարգով.

բ) պոռնոգրաֆիկ բովանդակության նյութերի համար, ապրանքներ տեղափոխող անձի համաձայնությամբ, կարող է կիրառվել միայն «Ոչնչացում» մաքսային ռեժիմը: Այլ մաքսային ռեժիմներով պոռնոգրաֆիկ բովանդակությամբ նյութերի՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխումն արգելվում է.

գ) «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արգելվում է ներմուծել ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 և 8705 ապրանքային դիրքերում դասակարգվող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 և 8703 90 10 ծածկագրերին դասակարգվող ավտոմեքենաների), որոնց վրա տեղադրված չէ վնասակար արտանետումների չեզոքացուցիչ:

Սույն ենթակետում նշված ավտոմեքենաների վրա տեղադրված վնասակար արտանետումների չեզոքացուցիչների առկայության ստուգման կարգը սահմանում է վերադաս մաքսային մարմնի ղեկավարը:

(2-րդ կետը լրաց. 25.03.04 N 427-Ն, 07.03.07 N 373-Ն, 27.12.07 N 1548-Ն, փոփ. 12.11.09 N 1334-Ն)

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի դեկտեմբերի 6-ի «Մաքսային որոշ հարաբերությունների կարգավորման մասին» N 615 որոշման 8-րդ կետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 31-ի N 902 որոշման

Ց Ա Ն Կ

«ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ», «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ», «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ԵՎ «ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ԱՆՄԱՔՍ ԱՌԵՎՏՐԻ ԽԱՆՈՒԹ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1. Պետական գաղտնիք պարունակող նյութեր

2. Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշաններով մակնշման ենթակա, սակայն չմակնշված ալկոհոլային խմիչքներ

3. Փայտանյութ (ծածկագրերն ըստ ԱՏԳ ԱԱ-ի՝ 4401 10 000, 4401 21 000, 4401 22 000, 4403, 4404)

(հավելվածը խմբ. 31.03.01 N 265, լրաց. 15.10.09 N 1157-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 31-ի N 902 որոշման

Ց Ա Ն Կ

«ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ՝ ՀՕԳՈՒՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1. Բոլոր տեսակի թափոններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարության դրական եզրակացության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծվող թափոնների

2. Պիտանիության ժամկետն անցած ապրանքներ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 31-ի N 902 որոշման

Ց Ա Ն Կ

«ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1. Կենդանի կենդանիներ և բույսեր, եթե դրանք չեն հանդիսանում անբուժելի վարակի աղբյուրներ

2. Պատմական, մշակութային և հնագիտական արժեք ներկայացնող առարկաներ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 31-ի N 902 որոշման

Ց Ա Ն Կ

«ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ», «ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ԱՆՄԱՔՍ ԱՌԵՎՏՐԻ ԽԱՆՈՒԹ», «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ», «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ԵՎ «ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1. «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության կողմ երկրների կարգավիճակ չունեցող երկրներից ներմուծվող՝ ստորև նշված նյութերը՝

Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Քիմիական բանաձևը	Անվանումը
2903 77 100	CFCL3	ֆտորեռաքլորմեթան

2903 77 200	CF2CL2	երկֆտորերկքլորմեթան
2903 77 300	C2F3CL3	եռֆտորեռաքլորէթան
2903 77 400 և 2903 77 500	C2F4CL2 և C2F5CL	քառաֆտորերկքլորէթան և հինգֆտորքլորէթան
2903 76	CF2BrCL, CF3Br և C2F4Br2	երկֆտորբրոմքլորմեթան, եռֆտորբրոմմեթան և քառֆտորերկբրոմմեթան

2. Ավտոմոբիլային բենզին, որի մեջ կապարի պարունակությունը գերազանցում է 0.013 գ/լ (ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի՝ 2710 12 510 և 2710 12 590):

3. Չյոդացված կերակրի աղ՝ սննդի մեջ օգտագործելու համար (ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի՝ 250100910):

4. *(կետն ուժը կորցրել է 07.03.07 N 373-Ն)*

5. Քլորֆտորածխածիններ պարունակող նոր և օգտագործված սարքավորումները:

(հավելվածը լրաց. 29.09.01 N 913, 12.02.04 N 353-Ն, 03.03.05 N 220-Ն, փոփ. 07.03.07 N 373-Ն, 25.04.13 N 438-Ն, լրաց. 03.10.13 N 1079-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ**